Հաստատում եմ՝ /Ա. Գրիգորյան

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՁԻՆՂԵԿ

Գ.ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

**2022-2023** ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

**2022-2023** ՈՒՍՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հիմք ընդունելով անցած ուստարվա ձեռքբերումներն ու բացթողումները՝ դպրոցը նախատեսում է նոր ուստարվա համար հետևյալը՝

-Անթերի կատարել ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության կողմից հաստատված և ստացվող հրահանգներն ու կարգադրությունները:
-Հսկողության տակ պահել ուսումնական պրոցեսի կազմակերպման ողջ ընթացքը: Տնօրինության և մեթոդմիավորումների միջոցով պարզել ինչպես յուրաքանչյուր ուսուցչի, այնպես էլ յուրաքանչյուր դասարանի որակական ցուցանիշները և անհրաժեշտության դեպքում կազմակերպել օգնություն:
-Ուշադրության կենտրոնում պահել ուսման որակի բարձրացման նպատակով դասավանդման նոր ձևերի ու մեթոդների կիրառման, ճիշտ և պատճառաբանված գնահատման, դասին հատկացված ժամաքանակի ռեալ օգտագործման, դասանյութը մատչելի ձևով հաղորդելու հարցերը:
-Ուժեղացնել հաճախումների հաշվառման, ուշացումների, անհարգելի բացակայությունների, դասերը լքելու փորձերի կանխման աշխատանքները:
-Ծրագրված կերպով մանկավարժական կոլեկտիվին մասնակից դարձնել ԿԳ նախարարության և մարզային կրթության վարչության կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին, սեմինար պարապմունքներին, գիտագործնական կոնֆերանսներին:
-Ուշադրություն դարձնել դպրոցի լավագույն ուսուցիչների առաջավոր փորձի տարածման վրա և ծավալուն աշխատանք կազմակերպել սկսնակ և երիտասարդ ուսուցիչների հետ, բարձրացնել նրանց ինչպես առարկայական, այնպես էլ մեթոդամանկավարժական պատրաստվածության մակարդակը:
-Ուշադրության կենտրոնում պահել սովորողների աշխարհայացքի ձևավորման, աշխարհաճանաչողության, քաղաքական հասունության, հոգեբանական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակության հարցերը:
-Մեծ տեղ տալ իրավական գիտելիքների արմատավորմանը, սովորողների մեջ ամրապնդել քաղաքացու իրավունքների և պարտականությունների սահմանադրական նորմերը, ծավալել ազգային - հայրենասիրական և համամարդկային դաստիարակչական աշխատանքներ:
-Ուշադրության կենտրոնում պահել պատանիների և աղջիկների սեռական դաստիարակության, անձնական և կոլեկտիվ հիգենայի ու անձի առողջության պահպանմանը վերաբերող հարցերը:

. Ռազմամարզական միջոցառումներ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարողը | Ժամկետը | Նշում կ. մ. |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 1 | Կազմակերպել և անցկացնել ռազմամարզական խաղեր նախազորակոչային տարիքի երիտասարդների միջև: | զինղեկ ֆիզ.ուս | 22-25.09 | |
| 2 | Կազմակերպել և անցկացնել 11-րդ դասարանցիների հանդիպում դպրոցի զորացրված շրջանավարտների հետ | զինղեկ | տ.ը. | |
| 3 | Կազմակերպել և անցկացնել <<Կորյուն>> ռազմամարզական խաղը | զինղեկ | ապրիլ | |
| 4 | Ստեղծել վահանակներ ռազմագիտության պլակատների համար, նորացնել և արդիականացնել ռազմագիտության կաբինետը | զինղեկ | տ.ը. | |
| 5 | Անցկացնել ԱԻ և ՔՊ օր | զինղեկ | 01.03 | |
| 6 | Կազմակերպել և անցկացնել երկօրյա ռազմադաշտային պարապմունքներ տղաների համար զորամասերում, աղջիկների համար գործնական պարապմունքներ պոլիկլինիկայում | զինղեկ բուժ.ուս | ապրիլ | |
| 7 | Ստեղծել վահանակ՝ <<Արցախյան ազատամարտիկներ>> | զինղեկ | տ.ը. | |
| 8 | Ակտիվորեն մասնակցել համաքաղաքային միջոցառումներին | զինղեկ | տ.ը. | |
| 9 | Անցկացնել զրույց-դասախոսություններ՝ ա.Հուշեր արցախյան հերոսամարտից բ. Հայ զինվորը իր օջախի պաշտպան | զինղեկ | տ.ը. | |
| 10 | Ներկայացնել հաշվետվություններ, աշակերտների մասին տվյալներ ՏԶԿ-ին | տնօրեն զինղեկ | տ.ը. | |
| 11 | Կազմակերպել և անցկացնել սպորտլանդիաներ 1-6 –րդ դասարանցիների միջև | զինղեկ ֆիզ.ուս. | տ.ը. | |
| 12 | Կազմակերպել և անցկացնել վոլեյբոլի , շախմատի մրցումներ | զինղեկ ֆիզ.ուս. | տ.ը. | |
| 13 | Ստեղծել ցուցադրական սեղան՝ <<Զինվորները կռվի դաշտում>> | զինղեկ | տ.ը. | |
| 14 | Հանդիսավոր ձևով անցկացնել 9-րդ և 12-րդ դասարանցիների քննությունները ֆիզկուլտուրայից | տնօրեն ֆիզ.ուս. | մայիս | |